

4594

Pueraria multiflora
1913 pith micrography



„ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐՏՆ“

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

— ՃՈԽ ՅԱՒԵԼԻ ԱԾՆԵՐՈՎ. —

ԲԱՑԻԱԾ Է 1914 ԹԻՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՀԱՅԿԵՐԸ» թեւակոխն է իր զոյութեան ԽՆՆԵՐՈՐԴ տարին: Նախորդ տարինեւի զործունելութեան արդիւնքները դրած են հայ մանկական գրականութիւնը սիրողների առջեւ:

«ՀԱՅԿԵՐԻ» համարներից է, որ լիաբուն հաղածքներ են անում հայերէնի նորագոյն դասագրերը:

«ՀԱՅԿԵՐԻ» նիւթերն են զիխաւորապէս, որ ձայնազրում են, բեմ են հանում մանկական ցերեկոյթներին և երեկոյթներին:

«ՀԱՅԿԵՐԻ» նրատարակութիւններն են առաւելապէս, որ ամբողջովին հիւրենիկալում են դպրոցական աշակերտական գրադարաններում:

891.99.1

39359 - սա

թ-16

Այսուհետեւ էլ խմբագրական կազմը անևեղ նետելու իր նախկին ուղղութեանը եւ սկզբնական նպատակներն եւ կը շարունակի՝

ա) ներքնել մանուկ ընթեցողներին վսեմ ձգտումներ, արծարծելով նրանց մէջ սէր դէպի մարդն եւ դէպի նայենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշտ հասկացողութիւն բնութեան եւ մարդու մասին, գ) զարգացնել նրանց նաշակը եւ դ) ուրախութիւն եւ աշխուժ մոցնել մանկական կեանի մէջ:

Այսուհետեւ էլ «ՆԻՔԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» հրատարակական Ընկերութիւնը, որը իր վրա է վերցրել անցեալ սարքանից «ՀԱՍԿԵՐԻ» հրատարակութիւնը, աշխատելու է «ՀԱՍԿԵՐԻ» ուրցը խմբել մեր մանկական գրականութեան լաւագոյն ուժերն եւ հմուտ մանկավարժներին ու բարելաւել «ՀԱՍԿԵՐԻ» բոլոր բաժինները:

Բաց անելով «ՀԱՍԿԵՐԻ» 1914 թի բաժանորդագրութիւնը՝ դիմում ենի նայ գիտակից ծնողների եւ պարտաճանաչ ուսուցիչների աշակեցութեանը եւ լիալյու ենի որ նրանք ոչ միայն կը տապես իրենց զաւակներին եւ աշակերտներին բաժանորդագրել «ՀԱՍԿԵՐԻՆ», այլ եւ կը տարածեն «ՀԱՍԿԵՐԸ» իրենց մերձաւորների եւ ծանօթների շըանում:

«ՀԱՍԿԵՐԻ» խմբագրութիւն

12535-6

10.80
53

Սահմանագործութիւն

1988-10



ՔԱՂԻԱԾՔՆԵՐ

1913 թի «ՀԱՍԿԵՐԻ»

ԺԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԻՔ

Մեծ գոլն* ընկաւ, ձընհամն ընկաւ,
Հողը շնչեց, զեփիւոն եկաւ...
ԱՐԵՒՔ.

— Այ աղբիւրներ, այ գետակներ,
Սառցի ներքե քընած էք դեռ.
Դուրս եկէք, դուրս,
Հուտ դէպի լուս...

ԶՐՆԵՔ.
— Վաւշ-վաւշ, վաւշ-վաւշ,

Էս ինչքան ուշ...

Աղջի, աղջի, ծիկ-ծաղիկներ,
Քանի քընէք, վեր կացէք, վեր...

ԺԱՂԻԿՆԵՐԸ.

Բարե, բարե, կարմիր արե,
ախ, ինչ լաւ է դէպի վերե—
ազատ, լոյս, տաք,
կապոյտ, յըստակ...

ԱՐԵՒՔ.

— Միրում էք ինձ...

ԺԱՂԻԿՆԵՐԸ.
— Ախ, էնպէս եմ սիրում, էնպէս,
Էլ առանց քեզ չեմ ապրիլ ես...
— Ես քեզ հետ եմ ուր որ գընաս...
— Ես կը տիրեմ՝ որ հեռանաս...
ԱՐԵՒՔ.

Ապա եթէ ձեզ համբուրեմ:
ԺԱՂԻԿՆԵՐԸ.

— Ես հաճոյքից կը կարմրեմ...
— Ես կը բուրեմ...
— Ես կը մարեմ...
ԱՐԵՒՔ.

Էս ինչ անթիւ ծաղիկներ կան.
Ոսկի գեղին, կարմիր, գեղձան...
Բացւել, լըցւել, ծաղկել են վառ
ողջ ինձ համար, ողջ ինձ համար:
Ցովհ. Թումաննեան

*) Մեղմ տաքութիւն.

ԺՏԻ ՀԱՐՍՆԻՔ

Միտիկներ հարսնիք ունեն,
Ճըզը ը-վըզը, ճըզը ը-վըզը...
պար են գալի, էլ քանի պար —
մէկի տեղոկ հարիւր, հազար:

— Թը լ' ռոռ, դէ թոէք,
կնանք-քերենք,

Հաւաքւել են խնամիներ,
հարս ու փեսայ, սանամէրներ,
կեսուր, կեսար, տէզերկնիկ:
մենակ չը կայ քաւորկնիկ.

Դ. Դեմիքիննեան

ԿԻԿՈՍԻ ՄԱՅԻ

Հեմիար

Մի աղքատ մարդ ու կնիկ են (իմանում է քոյրերի լացի պատ-
լինում, ունենում են երեք աղ- ճառը):

—Վայ քու մօրքուրին, կիկոս
Ժիկ:

Մի օր հէրը աշխատելիս է լի- ջան...—Սա էլ է զիմին տալիս ու
նում, ծարաւում է, մեծ աղջկա- քոյրերի կողքին նստում:
Նը ջուրն է զրկում: Էս աղջիկը Մէրը սպասում է սպասում,
կուժն առնում է գնում է աղ- ինքն է գնում, (իմանում է աղ-
բիւրը: Աղրիւրի գլխին մի բար- ջիկների լացի պատճառը):
ձր ծառ է լինում: Էս ծառը, որ —Վայ քոռանայ քու տատի աշ-
տեսնում է՝ իրեն իրեն միտք է քերը, կիկոս ջան ..—զարկում է
անում.

—Հիմի որ ես մարդի գնամ ու հետ սուգ անել:
մի որդի ունենամ, անունն էլ Մեծ աղջիկը շարունակ միե-
գնենք կիկոս: Կիկոսը գայ էս նոյնն է կրկնում:
ծառին բարձրանայ ու վէր ընկ- «Գնացի մարդի,
նի, քարովը գիպչի, մեռնի... ունեցայ որդի,
Վայ կիկոս ջան, վայ... գըդակը պոպոզ,
Աղջիկը տեղն ու տեղը ծառի անունը կիկոս:
տակին նստում է՝ սուգ անում... Վեր ելաւ ծառին
ցԳնացի մարդի,
ունեցայ որդի,
գըդակը պոպոզ,
անունը կիկոս:
Վեր ելաւ ծառին,
ցած ընկաւ քարին... Վայ կիկոս ջան,
Վայ կիկոս ջան, Վայ որդի ջան...»


Աղջիկը տեղն ու տեղը ծառի
տակին նստում է՝ սուգ անում...
ցԳնացի մարդի,
ունեցայ որդի,
գըդակը պոպոզ,
անունը կիկոս:
Վեր ելաւ ծառին,
ցած ընկաւ քարին...
Վայ կիկոս ջան,
Վայ որդի ջան...»

(Միջնակ աղջիկն է գնում, կացէք, եկէք գնանք մեր տունը,
իմանում է քրոջ լաց ու կոծի կիկոսի քերեխը տանք:
պատճառը):

—Վայ կիկոս ջան, վայ...—զո- մորթում, ժողովուրդ կանչում,
ռում է միջնակ քորը, նստում է ժամ ու պատարագ են անում,
քրոջ կողքին ու սկսում են միա- կիկոսի քերեխն ուտեցնում, որ
սին սուգ անել:
Նոր հանգստանում,

Հիմի պստիկ աղջիկն է գնում:

Ցովի. Թումանեան



ԲԼԱՌԻՆ

Ես բլրուլ եմ,
մի բռն ունեմ,
Մի բռն ունեմ սարին է:

Սիրտս բոց է,
սիրտս խոց է:
միջն լիքը արին է:

Ես մի բլրուլ
սարի սմբուլ,
արին կերթայ իմ սրտից:

Վարդս քաղած,
թուփը դատարկ,
Բնչպէս չը լամ կարօտից:

Սիրտս կուլայ,
կը մղկաց,
ցաւը թափեց թերբս:

Վարդս քաղած,
թուփը դատարկ,
Էլ ում ասեմ երգերս:

Աթ. Խնկոյեան

ԿԵՐՆՔ ՈՒ ԱՐԵՒ ԲԵԼԻԿԱ

Մի ուռենու տակ մի ջանէլ այ-
րի կին էր նստել: Լւացքն արել
էր ու ափին փոել. իր մանկանը
դրել էր ծնկին: Զուրն էր հոսում,
մայրն էր խօսում.

Ծիւ ծիւ, ծիլծիլա,
ծիլ-ծիլ ոսկիս կը ցոլայ.
Էս արևին շող կը տայ,
Էս ծաղկանցը ցող կը տայ.
Էս ծտերին թև կը տայ.
ալար-դալար կաներով,
կոտրած սրտիս սիւն կը տայ.
էսպէս անուշ երեխայ,
սէր ու ծիծաղ շաղ կը տայ:
Կանաչ դաշտի բուրգառն է,
կարմիր վարդի հոտ կը տայ:
Աթ. Խնկոյեան

○○○○○○○○

2003

ԶԱՐՄԻԿԻ ԸՒԾԵԼ

Տովինար-բաջենց Զարմիկը մի շատ կտրիճ տղայ էր: Հէնց որ սկսւեց հայերի ու թուրքերի մէջ կռիւը, էլ տանը չէր նստում. նա շարունակ դիլքերումն էր...

Վայրենացած հայ ամբոխը թափւել էր թուրքաց տները: Թալանով, կողոպուտով արբեցած մարդիկ կը ում, կը ում էին անվիրջ թուրքաց տներից զանազան իրեր...

Զարմիկը սարսափով լսեց որ մօլլա իմամ Հուլիի տունն էլ կողոպտւել է: Կողոպտիչներից մէկը պատմում էր:

— Հիմի մօլլի տունը հէնց պլոկած է, որ մի հատ լակ ձուն ինչ է — էն էլ չէք գտնիլ: Հա, մի բան կայ դեռ. մի չորս-հինգ ամսական աղջիկ խօխա: Ոնց երեսում ա, մոռացել են, թողել ու փախել: Էն է հրէ խեղճը կատի ձագի պէս կլաւում ա:

Մօլլին ու մօլլենց տունը Զարմիկը լաւ ճանաչում էր. մօլլի թոռներից շատ մաերիմ էր իր հասակակից Արքաս-Ալու հետ: և Խեղճ մօլլենց Արքաս-Ալի. նա էլ փախած է հիմի, — մտածեց Զարմիկը. — Նրանց խօխէն որ էստեղ մեռնի, ոնց լաց կը լի նա էն փախար, ոնց...

Էլ երկար չը մտածեց Զարմիկը ու վճռաբար քայլեց դեպի մօլլենց տունը:

Գնդակները սուլում էին ամեն կողմից, հետեակ ու ձիաւոր խըմբերը շարժում էին դէս ու դէն. Զարմիկը ճանապարհեց ամենախրին փողոցներով, վազելով, ցատկելով: Գնդակները վիստում

էին: Վերջապէս հասաւ մօլլենց դարպասին. դարպասն այրւում էր. ուշանալ չէր կարելի... Նա ներս նետւեց այրւող տախտակի վրայով, գնդակների տարափի տակով մօլլենց տուն... Սենեակ-ներից մէկի յատակի վրա, աւերած տախտերի տախտակների արանքում, մի չարսաւի վրա ընկած էր մանուկը. հազիւ նւում էր. քաղցից ու լացից ուժասպառ էր եղել:

Զարմիկը շտապ-շտապ փաթաթեց մանուկին չարսաւի մէջ, գրկեց, պինդ սեղմեց կրծքին ու դուրս թռաւ... Գնդակները շարունակում էին թափւել... Պատերից քսւելով առաջ զազեց. տեղ տեղ գնում էր կուկէկուուց... Ճանապարհին մի կողոպտիչ քիչ մնաց աւարը ձեռքից խիէր. տեսնելով՝ որ չարսաւի մէջ մի երեխայ է, ուզեց հրզեհւող տան կրակը նետել նրան: Զարմիկը դուրս պըրծեցրեց խօխային...

Զարմիկի հերոսութիւնը հիացրել էր թաղեցիներին: Ծովինարաշջուն բարի հեղնանքով ասողներ էին լինում.

— Աչքդ լոյս, Ծովինար-բաջի, էտ է քու Զարմիկն էլ ա թալան բերել, հարստացրել քեզ:

Ծովինար-բաջին ժպտում էր ու ի պատասխան ասում:

— Լաւ է արել. բա խեղճ խօխէն էնտեղ մեռնէր. Աստծու ստեղծած է, չչ. ինչ անհնք որ թուրք է: Մատաղ գնամ իմ Զարմիկին:

Ստ. Տէր-Աւետիքեան

ՀԱՅՐԵՆԵՐԻ ՊԱՇՏՈԱՆՆԵՐ



Ց'ըմ-բօ՛, ցը՛մ-բօ՛
ց'ըմ-բը՛ բ-բը՛ մ-բօ՛...
մարշ,
մարշ,
կուի մարշ...

Ց'մ բը՛ բ-բը՛ մ-բօ՛,
ցը՛մ-բը՛ բ-բը՛ մ-բօ՛,
կըուի կերթանք
քայլով մարշ...
Յ. Աղաբար

ԵՐԵՎ ԽՐԱՏ

(Պղնձէ քաղաքի գրոյցներից)

Իմաստուն էր Խիկարը. և նրա իմաստութեան համբաւը դուրս էր եկել Ալթուն թագաւորի պալատից ու հեռու տարածւել:

Ամիրխասն էլ ուզեց Խիկարի իմաստութիւնը լսել և մի օր ներս մտաւ Խիկարի դարպասից:

Խիկարը պիտի գնար թագաւորի պալատը. Նա լաւ համարեց հիւրին էլ հետը տանել: Բայց ասաւ.



—Քեզ կը տամ երեք խրատ. այս խրատները միտող պահիր ու չեն գղջայ.

«Տեղդ ճանաշիր, մի նստիլ վերև, որ հետպատէ ներքեւ չը գնաս. ցած նստիր, որ բարձրանաս վերև:

«Մի մէջ ընկնիլ ուրիշի խօսկցութեանը ե երբ քեզ հետ խօսեն, տասը լսիր, մէկը պատասխանիր:

«Մինչև քեզանից բան չուզեն, մէջ չընկնես ու չը տաս»:

Պալատ գնացին. խնջոյքն ըսկըսւեց:

(Բայց Ամիրխասը երեք խրատն էլ մոռացաւ ու մեծ փորձանքի մէջ ընկաւ, այնպէս որ թագաւորը հրամայեց դահճին նրան սպանել):

Խիկարը գլուխ տւեց թագաւորին և ասաց.

—Տէր, արդարութեան պահապան: Լաւ է որ ամեն մի հրամանի վրա մի անգամ արև ծագի. գիշերւայ հրամանը լաւ է որ լուսով կատարւի:

Ու խնդրեց որ թոյլ տան՝ իր հիւրին տանի իր մօտ տուն, ու խոստացաւ նրա հետ չը խօսել մինչև վաղը, մինչև էլ ետ պալատ գալը:

Խիկարը իր խօսքը կատարեց:

Բայց այսու ամենայնիւ կարողացաւ փրկել Ամիրխասին: Թէ ինչպէս փրկեց՝ կարդացէք «Հասկերի» յաւելած «ԵՐԵՎ ԽՐԱՏ» գրքոյկը:

Մարզար





ԻՄ ԱՃԽԵՐՀԻ ԴԵՐՈՒՆԸ

Ես իմ աշխարհի
գարունը կուզեմ,
զւարթ ու վսեմ,
զետակը փրփուր,
հաւերը կայտառ,
ծաղիկը պայծառ:

Էս օտար երկրի
գարունն է մռայլ,
ծաղիկը անփայլ.
արել կրակ,

զետակը տիսուր,
թոչունները լուռ:
Մեր սիրուն ձորի
զեփիւնն է քնքուշ,
արել անուշ...
Ա՛խ, իմ աշխարհի
գարնանն եմ կարօտ
մնուշ ու հոտոտ...
Հ. Հայրապետեան



02Ն ՈՒ ԵՐԵԳԻՆԸ

Ամառ էր, Նախրապան Սարօն
Նկատեց որ մի թփից դուրս սո-
լաց մի ահագին ուն օծ ու խո-
ժոռած դէմքով սկսեց նրան նա-
յել.

Զարհուրած Սարօն սկսեց փախ-
չել, իսկ օձն ընկաւ ետևից: Սար-
սափելի՛ էր...

...Հասնելով գետակին՝ Սարօն
ինքն էլ շիմացաւ թէ ինչպէս
անցաւ միւս ափը... Օձի սուլո-
ցը այլ ևս չէր լսում: Սարօն
ետ նայեց. օձը չը կար, բայց
գետակի միւս ափին մի թռչուն
կարծես կուռում էր ինչ որ բանի
հետ:

Դա մի արագիլ էր, նա կուռում
էր մի սև օձի հետ, ճիշտ այն
օձի հետ, որ քիչ առաջ իր յե-
տելից էր ընկել:

Արագիլը յանկարծ վրա թռաւ,
բռնեց օձի պոչից ու վիր սլա-
ցաւ: Երբ բաւականին բարձրա-
ցել էր, յանկարծ թողեց օձի պո-
չը. օձը ընկաւ գետափի ապա-
սամներից մէկի վրա և անշարժ
մնաց տեղը: Սատկել էր: Արա-
գիլը շտապով ցած իջաւ, կրկին
բռնեց պոչից ու ծածկւեց մօտա-
կայ բլուրի ետևում:

Սարօն ազատ շունչ քաշեց,

բայց և այնպէս չը վստահացաւ
անցնել գետակը:
Յակ. Աղբեսեան

ԶԱԽՉԱԼԻԾ

Երկու մեծ քար՝
ջաղացաքար,
գըոզըոսցով
զըոզըոսցով
մէկը վերից,
մէկը վարից
աղուն կաղան,
կը գոռգոռան.—
—Գառ-գճոն, բըռոռ-ոճոն,
գառ-գճոն, բըռոռ-ոճոն...
ինչ որ աղանք՝
մերն է բոլոր,
գառ-գօռն, բըռոռ-ոճոն,
գառ-գճոն, բըռոռ-ոօռ...
Զախախն ընկած
վերի քարին՝
էտ զոռոցում,
զոռզոռոցում
չըխչոխկալի
ձէն է տալի
արագ-արագ! —
—Չէ, չէ,
ինչ որ աղաք՝
Երկու ձեզ, մինչ ինձ.
չէ, չէ,
ինչ որ աղաք՝
Երկու ձեզ, մինչ ինձ...
Յ. Աղարար



ԳԻՓ ՀԻՆ ՏԵՐԻ

Ցուսիկը մի փոքրիկ ձի ունէր, տասխանին քշում է ձին, գնում
մի հատ էլ գեղեցիկ փիսօ: Մի նոր տարուն բերելու:

օր նա նստեց ձիու վրա, առաւ Բայց գուրսը այնպէս ցուրտ
փիսօին իր գիրկն և կանչեց. Էր, որ Ցուսիկը խսկոյն ներս

—Մայրիկ, մենք գնում ենք փախաւ իր ձիու ու փիսիկի հետ
նոր տարուն բերելու: Նոր տա- և ասաւ բարկացած.

րին որ գայ, էլ այսպէս ձիւն ու —Գիթ Հին տարի, սպասիր,
ցուրտ չի լինի. չէ, մայրիկ: Թող նոր տարին գայ..

Յ. Ղարիբեան

օօօօօ

ՃՐԻՍՆԻ ՄԱՀՀԸ

Մի լուծ հզն ունէինք, մէկի Երկու օր անցաւ, Շրւանը ոչ
անունը՝ Ալւան, միւսինը՝ Շըր-խոտ է ուտում, ոչ ջուր է խը-
ւան: Իրար շատ նման, իրար մում... նա էլ հիւանդացաւ...
շատ սիրով, հաւասար ուժով, —Եկէք, երեխէք, —ասաւ պա-
հաւասար խելքով: Երբէք իրաւ պըս, —կամաց քշեցէք, տարէք Է՛
րից անջատ չէին լինի:

Բայց երանի թէ չը գար էն ներս չը տեսնի...
ցաւի տարին, ժանտախաի տա- Լալով քշեցինք, շատ հեռու
րին...

Ալւանը հիւանդացաւ, մեր ամ-
բողջ տունը սգի մէջ կորաւ: Չոր- Շրւանը պառկած էր սրահի ա-
րորդ օրը Ալւանը չը կար. ուա՞ն ճիշտ նոյն տեղը, ճիշտ նոյն
պառկած էր անշարժ, չարդախ դիրքով՝ որպէս Ալւանը:
պողերը զէպի սրահը, ոտքերը Մեռնելիս էլ ուղեց ընկերոջ
չուած:

Շրւանը կանգնած բարձր բա-
ռաջում, լիզում էր նրան...:

Միմակ



ՄԱՐԴԱՐՏՎԱԾՎԱՂԻԿ

Աւանդութիւն

Հին ժամանակ հեռու Հնդկաստանում ապրում էր մի գեռատի կոյս՝ չքնաղ ու քնքոյշ, հագուստը սպիտակ, կրծքին դեղին փունջ:

Նրան կարելի էր տեսնել հիւծւած, մաշւած երեխանների, դալուկ, հիւանդ պատանինների, գերեզմանի դուռը հասած ծերունիների մօտ, նրանց հետ զգոյշ և անուշ խօսելիս:

Ամենազօր Աստւած Բրահման կոյսի գովքը լսեց ու ասաւ,
— Թող այդ կոյսը յաւիտեան ապրի և միխթարի ցաւ ու վիշտ ունեցողներին:

Եւ կոյսը փոխարկւեց մի համեստ ծաղկի՝ մարգարտածաղկի. հագուստը՝ սպիտակ, սրտիկը՝ գեղին..,

Այդ օրից նա դարձաւ սիրոյ և կարեկցութեան խորհրդանշան:

Յ. թ. Սաութկեան



ՍՈՒՐԻԿԻ ՎԻՃՏԸ


Նախշուն աչքերը արցունքով լիբը
տանից դուրս եկաւ փոքրիկ Սուրիկը:
Մօրքոյրը նրան դռանը տեսաւ.
— Էտ ուր ես գնում, խելօք ջան, ասաւ,
քեզ ուլ է ծեծել, ինչո՞ւ ես լալիս:
— Խնձոր եմ ուզում, նանը չի տալիս,
Մէջքիս խփում է թէ՛ գնա կորին,
Մեր աանն, ասում է, ծառ կայ խնձորի.—

Ու մեր Սուրիկը,

աչքերը լիբը

«Գնում ե՛մ կորչեմ»... կանչում է լալիս,
«իմ նանն», ասում է, «ինձոր չի տալիս»...

Գ. Մեսեան



ՅՈՂԻԿԻ ՎԱՀՈՒԾ

Փոքրիկ ծօղիկը սոսկում էր թէ ինչպէս էր մուրացկանը ու աղքատներից: Հայրիկն ու մայ-տում Հետզհետէ նա մօտեցաւ, ըիկը նրան հասկացնում էին. մօտեցաւ, ու պազելով մուրաց-
— Աղքատը փիս չէ. նա գալիս կանի հանդէպ սկսեց զննել նրա է հաց ինդրելու. նա քաղցած է, անատամ բերանը, նրա խճճւած իսկ գու, ծօղիկ, նրան հաց կը իսպն մօրուքը, ճղւած արխատմաս, չէ:

Ծօղիկը լուռ լսում էր: Բայց Ու մի զարմանալի լրջութիւն ու յետոյ նա յուզւած ու ցած ձայ-տիբութիւն համակում էր նրա նով հարցնում էր.

— Հայրիկ, բա աղքատն էլ լաւ երբ մուրացկանը գանգաղ իջաւ է. նա փիս չէ, նա ծօղիկին չի աստիճաններով, աղջիկը կոնները տանի, նա քաղցած է, նա հաց է պարզեց պատշգամբի ցանցի վեռզում, համ:

— Հայրիկ, բա աղքատն էլ լաւ երբ մուրացկանը մի երկու թաթերով և այսպէս մաս աման կերակուր և մի կտոր հաց անշարժ... Ախ, ինչո՞ւ այսպէս մտածկոտ, դրաւ իրենց պատշգամբը բարձ- Ախ, ինչո՞ւ այսպէս մտածկոտ, րացած մուրացկանի առաջ, ծօ- տիսուր էին նրա խոշոր աչիկները, զիկը աչքերը չուծ նայում էր ն. Գերասիմնեան



Գ Ա Յ Լ Ը

Առակ

Գող աւազակ գայլի մէկին
չոքած գտան գառան բկին.
Նրան բռնած գիւղը նարան,
զիսին արին ժամ պատարագ
ու կարգացին աւետարան,
որ նա դառնայ խոտածարակ,

իրեն փոխէ,

ճանճ չը կոխէ:

Ամբողջ գիւղը ժամ, աղօթքի,
մէկ էլ գայլը ելաւ ոտքի.

— է, շուտ արէք, ժամնոր, ասաւ,
ոչխարն արդէն սարը անցաւ,
Աթ. Խնկոյեան



ՅԱԻԵԼԻԱԾՆԵՐ

ՈՎԿԻԾՆԻ ԹԱԴԱՌՈՐԸ ՈՍԿԵՊՈԶԸ


Բնագիտական գրոյց

Այս յաւելւածը պատմում է մի կէտորսի կեանքը և նկարագրում է ովկիանի թագաւորի, կէտի սովորութիւնները։ Մի տաղանդաւոր գրոյց է բնագէտ Ռուբէն Դաքրիչէնի։

ԿԱՊԻԿՆԵՐ

Բնագիտական գրոյց

Հեղինակը՝ օր. Սոֆիա Գևառչեանը հետաքրքրական ձեռվ նըկարագրում է կապիկների կազմածքը, ապրելու եղանակը, նրանց սովորութիւնները՝ շաղկապւած նրանց կեանքի պայմանների հետ։



ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒՀԻ

Մանկական պիես

Մանուկները մի լուսարարի Մ. Բաբայեան, որ լաւ ծանօթ աղջկան իրենց շրջանն են ըն- է մանկական աշխարհին, ուժեղ դուռնում և դարձնում են ի- գծերով պատկերացրել է մանուկնենց ընկերութիւնի։ Սրտաշարժ և ների բնաւորութիւնները։ և պշխուժ պիէս։ Հեղինակը, Խ.

Արեւելեան աւանդութիւն

Հաւատարիմ և ճշմարտախոս հովիւը՝ հիւրին տած խօսքը կատարելու համար, մորթում է տիրոջ ամենասիրած ոչխարը՝ Ասկեպովը։ Առաօտեան՝ գեռ տիրոջ գալուց առաջ, փորձում է որ և է սուս հնարել, բայց միշտ անաջող, Գ. Մինսեանի այս հեղինակութիւնը գեղեցիկ նկարագրում է ինչպէս հովիւը ճգնում է սրտախօսւթիւն սովորել և միշտ ինքն իր սուտը բաց է անում. վերջապէս ճակատը պարզ՝ կանգնում է տիրոջ առջև և միայն ճշշմարտութիւնն է ասում։

Եւ ինչպէս ըս հպարտանար տէրը իր այսպիսի ճշմարտախոս հովով։

„ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ՀԱՍՏԱՐԱԿՈՒՀԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Աբագեան Յովս., Աբրահամեան Սօֆ., Լիսիցեան Ստ., Կուգանեան Աննա, Մեծքայեան Հ., Մնացականեան Մարգարիտ, Սերեբրակեան Մարիամ, Սերեբրակեան Նունէ, Թոստոմեան Պետր.։



«ՀԱՍԿԵՐԻ» խմբագրական կազմը

Աղաբար Յակ., Ապրեսեան Յակ., Գալաչեան Սօֆ., Դեմիքրեան Դեր., Զաւարեան-Յակոբեան Սօֆ., Թումանեան Յովի., Լիանովեան Կատ., Լիսիցեան Կատ., Լիսիցեան Ստ., Խնկոյեան Աթ., Յարութիւնեան Երան., Մարգսեան Նիկ., Տէն-Աւետիքեան Ստ., Տէր-Նիկողոսեան Շուշ., Քափանկեան Ստ.։

Խնդրում ենք թեմական (մինչեւ III դասար.), ծխական եւ այլ դպրոցների աշակերտներին եւ անհարակ «ՀԱՍԿԵՐԻ» փոքրիկ ընթերցողներին մինչեւ 1914 թ. մայիսի վերջը ուղարկել «ՀԱՍԿԵՐԻ» խմբագրութեանը իրենց Խն.ԲՆՈՒՇՈՑՆ ուսանաւորները, պատմածքները, հերեամները, պիէսները եւ այլն, նաև նկարներն ու ձայնագրած երգերը։ Որոնցից ստեփ աջողները ընտրելով՝ խմբագրութիւնը լոյս կլնծայի «ՀԱՍԿԵՐԻ» յատուկ մի համար։

4594

„ՆԻԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՈՅԱԾ Է 1914 թ. ԲԱԺԱՆՈՐԴՈԳՐՈՒԹԻՒՆԸ

ՅԱԿԵՐ

(ԽՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

մանկական պատկերագարդ ամսագրի
մօտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և Ա.Թ. ԽՂՆ-
ԿՈՅԵԱՆԻ


- 1914 թւին «ՀԱՍԿԵՐԻ» ՅԱՀԵԼԻՇՁՆԵՐԸ լինելու հա-
1 Շքել ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳԻՐՑ ԱՄԵՆԱՓՈՔՐ ՀԱՍԿԵՐ ՄԱ-
ՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ,
2 ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԵՔԻԱԹ,
2 ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄԻԱԾՔ,
1 ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑ,
1 ՀԱՄԱՇԽԱՐՀՈՅՑԻՆ ԱԿԱՆԴՈՒԹԻՒՆ,
4 ՄԱՆԿԱԿԱՆ ՎԵՊԻԿՆԵՐ,
1 ՄԱՆԿԱԿԱՆ ՊԻԷՍ

Բաժնեգինն է ճանապարհածախսով

(յաւելուածներով)

Տարեկան	4 լ.
Ամսական	— 35 լ.
Երեք ամսական	1 լ.
Կէս տարւան	2 լ.

Պարսկաստանում 4 լ. 50 կ.
Արտասահմանում 12 ֆր.
1906 թ. յունւարից մինչև 1913 մ. դեկտեմբերի 1
իսկ առանց յաւելուածների և
Խմբագիր Աս. Լիսից



Խմբագրութեան հասցէն Թիֆլիս, Սերգէ^է
Տիֆլիս, Редакция журнала „Аскеръ“. Tiflis (Caucase), Rédaction du
journ. «Hasker».

Թիֆլիսում կարելի է գրւել «Գիր» և «Գուտենբերգ», երեանում՝ Պետրոս
Յովհաննիսանի, իսկ Վաղիկաւկառում՝ Դէկարիանեանի գրախանութներում, նաև
կայորութեան ԲՈՂՈՐ ՓՈՍՏԱՏՆԵՐՈՒՄ:

00088/3

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0008813

